

տասարդ արեղաները: Անոնք չփռւմ ունեցած էին ի Լվով Փռանկ զպրոցականներու հետ եւ անդրադարձած իրենց ստացած կրթութեան անբաւականութեան: Կը պատմէ Դաւրիժեցի թէ «եղբարք ոմանք»¹⁹, որոնք Խաչատուր նուիրակի հետ ուղեւորած էին Լեհաստան, վասն զի «ընդիմակայ ախոյեանի» չէին պատահած, «ի միտս իւրեանց կարծէին զինքեանս գիտնականս եւ կարողս ոմանս զոլ»: Բայց յուսախաբուեցան, երբ ի Լվով 1631ին «յազգէն Փռանկաց պատրիկք (patres) ոմանք եկին առ աշակերտսն Մովսիսի վասն հակաճառութեան»: Անոնք հարցուցին մերիններուն. «վարեմ բառս անո՞ւն է թէ բայ». մերինները քերականութեան անհմուտ ըլլալով չկրցան ուղիղ պատասխանել. եւ առիթ տուին անոնց որ ծիծաղին եւ արհամարհեն զիրենք: Այս պարտութենէն չափազանց զգածուելով «իմացեալ են թէ զայն զոր գիտեն ոչ է գիտութիւն, այլ պարտ է նոցա զարտաքին գիրքն կարդալ» (Դաւր. 398/9):

Էջմիածին վերադառնալուն պէս Սիմէոն Զուղայեցի փութաց խառնուիլ Մելքիսեթի աշակերտներու թուին մէջ յԵրեւան ուսանելու «զարտաքին գիրսն». հոն իրեն աշակերտակից ունէր հայրենակիցն Ոսկան: Լլովի միջոգէպը նախանձ չարժած էր նաեւ էջմիածնի միաբաններու մէջ: Կը փափագէին

¹⁹ Անոնք են Գրիգորիս Տաթեւացի եւ Սիմէոն Զուղայեցի. հմմտ. էջ 259: